



ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՍՓՅՈՒՌԻ ՄԵՋ

ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ՓՈԽԱԴՐՈՒԹՅԱՆ 500-ԱՄՅԱԿԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆՑ ԻՄԱՍՏԸ

Սույն վերնագրի տակ Փարիզի «Ժողովուրդ» թերթը, իր «Մեր ձայնը» բաժնում, Ա. Ն. ստորագրությամբ մի հոդված է տպագրել, որի շահեկանությունը նկատի առնելով արտատպում ենք այն:

Մեր ազգային պատմությունից գիտենք, որ 11-րդ դարում, Բագրատունյաց թագավորության անկումից հետո, հայկական մի հոծ բազմություն գաղթեց դեպի արևմուտք և հաստատվեց Կիլիկիայում, ուր հայ իշխանների հետզհետե զորեղանալու շնորհիվ հիմնվեց Ռուբինյան հարստությունը— Փոքր Հայքի (Կիլիկիո) հայկական թագավորությունը:

Կաթողիկոսական Աթոռը, որ սկզբից ի վեր հաստատված էր Արշակունյաց թագավորության մայրաքաղաք Վաղարշապատում, դարեր շարունակ հետևեց աշխարհական իշխանության տեղափոխություններին: Այսպես՝ 484 թ. Կաթողիկոսական Աթոռը փոխադրվեց Դվին, որ հայ մարզպանների մայրաքաղաքն էր: 928 թվից սկսյալ Դվինից հեռանալով՝ մեր կաթողիկոսները հաստատվել են Արգինա, Աղթամար, Վարազ, Անի, Մոփք, Հոռմկըլա և վերջապես Սիս՝ 1292-ին: 1441-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսական Աթոռը վերջնականապես փոխադրվեց իր սկզբնական տեղը՝ Էջմիածին և Սսի կաթողիկոսությունը շարունակեց մնալ «Կաթողիկոս Ամենայն Հայոց Տանն Կիլիկիո» տիրույթում:

Նպատակ չունենալով եկեղեցական պատմություն շարադրել, մենք ուզեցինք այս մի քանի թվականներով ընթերցողին մատնանրել այն փաստը, որ հայոց եկեղեցական իշխանությունը միշտ աշխատել է լինել այնտեղ, ուր հայկական աշխարհիկ իշխանությունն է եղել:

1441-ի դեպքերը մի նշանակություն ևս ունին: Այդ թվականին, ինչպես տեսանք, Կաթողիկոսական Աթոռը Սսից փոխադրվեց Էջ-

միածին: Ժամանակի բոլոր պատմիչների վերաբերմամբ (գլխավորապես Ստեփաննոս Օրբելյան) Հայրապետական Աթոռի փոխադրության հիմնական գրգռատճառը եղել է օտար ազդեցությունների վտանգը: Օտար ասելով պետք է հասկանանք Արևմուտքը: Արևմուտքն է, որ վտանգավոր է նկատվել հայ եկեղեցու անաղարտ պահպանման տեսակետից:

Եթե քննական մի հայացք նետենք քրիստոնեական շրջանի մեր պատմության վրա, դուրսդրված պիտի համոզվինք, որ Արևմուտքը վտանգավոր է եղել ոչ միայն հայ եկեղեցու, այլ և հանուր հայ ժողովրդի կենսական շահերի պաշտպանության տեսակետից: Այս այսպես լինելով հանդերձ, եկեղեցին է միայն, որ իր ունեցած կազմակերպվածության շնորհիվ կարողացել է հեռանալ Արևմուտքից և փրկել իր ինքնուրույնությունն ու միասնականությունը: Մինչդեռ ժողովուրդը ինքը՝ զրկված լինելով աշխարհիկ որևէ կազմակերպությունից, քաղաքական միասնական ղեկավարությունից, թողնվել է իր բախտին:

Պատմական այս ճշմարտությունը ճակատագրական դեր է խաղացել մեր ամբողջ պատմության ընթացքում և շարունակում է որոշ դեր խաղալ նույնիսկ այսօր: Մեր միակ բարեբախտությունն այն է, որ մեր ժողովուրդն այսօր քաղաքական մի հենարան ունի, որի վրա կարող է կոթնել: Այդ հենարանն էլ Սովետական Հայաստանի Հանրապետությունն է, զոր մենք ունեցանք, որովհետև քաղաքականապես կապվեցինք Արևելքի հետ, Արևելքում հանդես եկող նոր ուժի՝ Հոկտեմ-

բերյան Հեղափոխության հետ զնացող հայությունն էր, որ այդ արդյունքին հասավ: Մինչդեռ Արևմուտքին կապված հայ ղեկավարները ոչ միայն ունայնաձեն մնացին, այլ և ընդմիջտ անհետացան հայ ժողովրդի պատմության բեմից: Ահա այս է այն եզրակացությունը, որին հանգում է անաշու և անկաշկանդ միտքը, երբ այսօր իր առաջ տեսնում է Կիլիկիո Հայոց Կաթողիկոսությունը պաշտոնաթերթի թիվ 7—8 համարները՝ նշվիրված Մայր Աթոռի փոխադրության 500-ամյակին:

Ի՞նչ է նշանակում այս:

Ի՞նչով բացատրել այն փաստը, որ այսօր Նորին Ս. Օծուխյան Կիլիկիո Հայոց Կաթողիկոսը՝ Ս. Տ. Գարեգին Ա. և ամբողջ հոգևորական դասը տոնում են Ամենայն Հայոց Կաթողիկոսական Աթոռի փոխադրությունը Սսից էջմիածին, ինչ որ ինքնին Կիլիկիո Աթոռի պարտությունն է նշանակում: Մի՞թե Գարեգին Կաթողիկոսը, որ իր եկեղեցական բարձր դիրքի հետ միասին ունի նաև բարձրագույն հայ մտավորականի տիտղոսը, որը մեր այսօրվա մեծագույն հեղինակավոր անձնավորությունն է, որպես հայ գրչագիր մատենագրության վերածանող, մի՞թե նա չի ըմբռնում իր արածի իմաստը: Ո՛չ, նա շատ

լավ է ըմբռնում այդ և այդ իսկ պատճառով նա մեծ է: Մեծ է, որպես հայ եկեղեցու պետ, մեծ է որպես հայ մարդ: Նա իր մեծությամբ հավասարվում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զ-ին, և այդ երկու կաթողիկոսները պիտի անմահանան հայ եկեղեցական պատմության մեջ, որովհետև իրենց մեծագույն իմաստությունը եղավ տեսնել Սովետական Հայաստանի մեջ հայ ազգի փրկությունը: Իսկ այս նշանակում է, որ նրանք երկուսն էլ ուղեցին, որ հայը կտրվի Արևմուտքից և կապվի Արևելքի հետ: Այսպես ուղեցին, որովհետև տեսան, որ Արևմուտքից այսօր էլ վտանգ կա, և այդ վտանգը սպառնում է ոչ միայն հայ եկեղեցուն, ինչպես որ ժամանակին տեսան իրենց նախորդ հայրապետները, այլ և հայ ժողովրդին ընդհանրապես:

Կիլիկիո հայ հոգևորականությունը և հավատացյալ ժողովուրդը, որոնք այսօր ցնծությունով տոնում են 1441 թվականի պատմական ակտը, ուղում են սակ, որ հայոց ազգի թե՛ քաղաքական և թե՛ կրոնական ղեկավարությունը գալիս է մեծ Հայքից՝ Սովետական Հայաստանից: Այս պետք է լինի նաև Սիվուքի հայության մտածելակերպը:

(«Ժողովուրդ» 8 նոյեմբերի 1947 թ.)

ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿԸ ՎԵՆԵՏԻԿԻ ՄԵՋ

Վենետիկ, 2 հոկտ. 1947 թ.

Տասը օրն ի վեր հովուական այցելությամբ և ներգաղթի հանգանակությամբ Միլանո ժամանած Եվրոպայի Հայրապետական պատվիրակ Գեր. Ս. Արտավազդ Ս. Արքեպիսկոպոս Սյուրմեյան երեկ, ընկերակցությամբ իր եթովպիարենակ եղբոր ու հարսին, Վենետիկ հասավ և կես օրն հետո Ս. Ղազար կղզին այցելելով, նավամատուցին վրա ընդունվեցավ Մխիթարյանց Արքահայր Գեր. Սրապիոն Եպիսկոպոս Ուլոհոճյանի և ամբողջ միաբանության կողմն ու տաճար մտնելով պահ մը աղոթեց և հոգվոց մը ըսավ Մխիթար Արքահոր դամբարանին վրա: Պատվիրակ Սրբազանը առաջնորդվեցավ դահլիճ, ուր եղած ամանդական հյուրասիրություններն հետո մտերմական խոսակցություններ ունեցավ Արքահոր և ներկա վարդապետներու հետ: Արտավազդ Արքեպիսկոպոս ավելի քան երկու ժամ մնալն և մեկնումի պահուն վանքին տպարանը այցելելն և քանիցս խումբով լուսանկարվելն հետո հրաժեշտ առավ Արքահորմեն և միաբաններն և Հայր Վահան վարդապետ Հովհաննեսյանի ընկերակ-

ցությամբ և վանքին կոնտուլով վերադարձավ քաղաք:

Պատվիրակ Սրբազանը այս առավոտ այցելություն տվավ Լիտոյի փոքրաթիվ գաղութին և բոլորն ալ մխիթարեց Ս. Հաղորդություն տալով տասն ավելի բարեպաշտներուն: Այրի տիկին Բորոթի խնդրանքով և Բորոթի, Պապայանց ու Բորաճյան ընտանիքներուն հետ այցելեց կղզիին գերեզմանատունը և Բորոթիներու ընտանեկան դամբարան-մատուրան մեջ կատարեց հոգեհանգիստ: Մատուռին օծումը տարիներ առաջ կատարած էր Ս. Գարեգին Արքեպիսկոպոս Խաչատուրյան: Սրբազանը հոգեհանգիստ կատարեց նույնպես Բրոֆ. Հարություն Պարտեզյանի շիրմին վրա և ժամը 3.30-ին վերադարձավ Միլանո, ուր վաղը հոգեհանգստյան մասնավոր Ս. Պատարագ կատուցանեն Սեֆերյան բարեհամբավ գերդաստանի ննջեցելոց հիշատակին: Գաղութն շատ փափաքեցավ, որ Սրբազանը քանի մը օր ավելի մնար Վենետիկ, բայց ըստիպված ըլլալով շուտով վերադառնալ Բարիդ, ահամա մերժեց եղած հրավերը ու խոս-

տացավ հառաջիկա տարի կրկին այցելել, երբ Թրեհսթի, Հոտմի և Պատի, ինչպես նաև Յուկոսլավիո փոքրամիջի գաղութներուն այցելելու առթիվ անցներ Վենետիկեն:

Կիրակի օր, ժամը 2.45-ին, Պատվիրակ Սրբազանը Միլանոյի ձայնասփյուռեն քարոզեց և իր պատգամները տվավ Եվրոպայի իր

թեմի ժողովրդյան և հանուն բովանդակ թեմին բարեմաղթություններ ըրավ Ամենայն Հայոց Վեհափառ Տ. Տ. Գևորգ Սրբազանադուն Կաթողիկոսի անվան տարեկարծին առթիվ:

(«Եվրոպա» 19 հոկտեմբեր 1947 թ.)

Ս. ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐ. ՏԻՐԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍՈՅԱՆ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԵՋ

Քաղաքիս Հոգաբարձությունը Սրբազան Առաջնորդի Սենթ Քեթրինս այցելությունն օգտվելով հրավիրեց զինքը բանախոսելու:

Սեպտեմբերի 15-ի երկուշաբթի երեկոյան անգլիական Սենթ Սալմոն եկեղեցւոյ սրահին մեջ կռկիկ և լուրջ բազմության մը ներկայության շինիչ ու իմաստալից քուրդ մը խոսեցավ ու եկեղեցական արարողութեն մը վերջ հյուրերը ու ներկա ժողովուրդը հյուրասիրվեցան ու մեկնեցան ուրախ տպավորության ներքո:

Հաջորդ օրվան պաշտոնական այցելությունը տեղի ունեցավ Սրբազան հոր ու քաղաքիս քաղաքապետի միջև ու այս առթիվ Հոգաբարձությունն ամեն ջանք թափած էր, որ վայելու ձևով մը տեղի ունենա ու որոշված ժամուն, 3.30-ին, արդեն Սիրի Հովի առջև էինք, ունենալով մեզ հետ գեղեցիկ ծաղկեպսակ մը՝ գետեղելու անծանոթ զինվորի շիրիմին վրա Սրբազանի ձեռամբ:

Սրբազանը շրջապատված էր դանատահայոց Առաջնորդ Գեր. Հմայակ վարդապետ Ինթոյանե, Հոգաբարձության պատվարժան նախագահ Տիար Լևոն Պապայանե ու Հոգաբարձության պատվարժան վարչության անդամներ: Ծիշտ այդ բոլորին տեսանք մեր սիրելի քաղաքապետը, Մր. Սանտրոսի քաղաքապետարանեն դուրս ելելը ու մեծ մոտենալը, իր հետ ունենալով Քրնթրոլը Մք Իննիս ու Իլլըն Լեմբորթ: Իրար ներկայացվելի վերջ Սրբազան Հայրը ծաղկեպսակը գետեղեց անծանոթ զինվորի շիրիմին վրա ու մի քանի վարկյան լռելյան աղոթք մը տեղի ունեցավ: Այդ միջոցին քաղաքիս եր-

կու մեծ թերթերու թղթակիցները ու լուսանկարիչները եկած էին, որոնք մի քանի ձևով պատկերներ քաշեցին մեր Առաջնորդի քաղաքապետի հետ խոսած վարկյաններուն:

Որքան ուրախ ու հպարտ կզգանք այսպիսի բարձր ուսում ստացած Առաջնորդ մը ունենալու համար, ոչ միայն մեզ հայերու, այլ նաև օտարներու կրնանք պարծենալ իր մով: Չմոռնամ ըսելու, որ Սրբազան Հայրը իր հետ բերած էր սարկավագ Պ. Լևոն Ալթունյան, որ շատ խելացի, պարկեշտ երիտասարդ մըն է ու կբաղձա եկեղեցական ասպարեզ մտնել, որ պատիվ պիտի բերի մեզ՝ այսպիսով բարձրացնելով մեր եկեղեցական սքեմը: Չմոռնամ ըսելու քանի մը գնահատական խոսք մեր ժրջան ու կորույի գանատահայության հովիվ Հմայակ վարդապետ Ինթոյանի մասին: Ինքն ալ եղած է մեր Սրբազանի սաներեն մին Նրուստղեմի մեջ: Մենք դանատահայերս հպարտ կզգանք իր մով, մեզ կմնա իրեն տալ մեր նյութական և բարոյական օժանդակությունը, որ զինքը ունենանք մեր մեջ երկար ժամանակ: Յարգ Սենթ Քեթրինսի ու Թորոնթոյի գաղութները իրենց նյութական օժանդակությունը տրված են: Կմնա մյուս դանատահայ գաղութները ու ինչպես նաև Նիակարաֆոլսի հայաշատ գաղութը իրենց նյութական ու բարոյական օժանդակությունը տան:

Օն ուրեմն, սկսինք գործելու. դասեր մեր սիրելի ու հին եկեղեցին ամեն բանի վերջ ուղորդվելով իր շուրջը:

Հ. ՍՈՒԻՆ

(«Լուսաբեր» հոկտեմբեր 23, 1947 թ.)

ԳԵՎՈՐԳ ՔԱՀԱՆԱ ԳԱՍԱՐՃՅԱՆ ԿԱՐԳԱԼՈՒՅՑ

Լուս Անճելոսի Ս. Հակոբ եկեղեցւոյ հովիվ Տեր Գևորգ քահանա Գասարճյանը զրկած ենք քահանայագործելու իրավունքն 1947 թ. հուլիս 24-ին, հետևյալ պատճառներով, որոնք լուրջ քննության և խորհրդակցության նյութ եղած են Լուս Անճելոսի Ս. Հակոբ եկեղեցւոյ Հոգաբարձության կողմն սարքված մասնա-

վոր ժողովներու մեջ, որոնց մասնակցած են Անդամական ժողովին ղեկավար, տեղւոյն երեսփոխանները և Շինության Հանձնախումբը, և որոնց նախագահած է Տեղապահ Սրբազանը, ի ներկայության Մամբրե Արքեպիսկոպոս Գալֆայանի:

Հոգաբարձության կողմն ներկայացված

բերանացի և գրավոր ամբաստանությունները, որոնց իրողության համաձայն գտնված են ժողովներում մասնակցող անձինք, նույնպես նաև Մամբրե Արքեպիսկոպոսին ամբաստանագիրը՝ ուղղված Տեղապահ Սրբազան Հոր, Գասարճյան քահանային կարգալուծ ընելու թելադրությամբ, առիթ տվին ունենալու երկու բացառիկ ժողովներ Առաջնորդարանի գրասենյակին մեջ, Ֆրեզնո, որոնց ընթացքին քննվեցան Գասարճյանի դեմ հավաքված բոլոր անբաստանողական փաստերը և ժողովներեն միույն մեջ լավեցան նաև ամբաստանյալ քահանային պաշտպանողական բացատրությունները:

Ազգային կեդրոնական Վարչությունը տեղեկանալով տրված բոլոր փաստերուն, և նաև խնամքով պատրաստված Քննիչ Հանձնախումբի և տեղապահ Սրբազան Հոր տեղեկագրերուն, միաձայն հավանություն և կալ աչն ցավառիթ եղբակացության, որ Գասարճյան քահանային արժանի է կարգազրկումի:

Ստորև կնշենք անոր բաղմաթիվ հանցապարտ աղարքներեն միայն մի քանին, որոնք պիտի կրնան դադափար մը տալ հիշյալ քահանային գործած հանցանքներուն մասին:

Ա. Նա չէ հավատացած իր հոգևոր կոշման հավատալիքներուն, որոնք պարտագրելի են որպես դավանաբանական գիտելիքներ Հայաստանյայց Առաքելական եկեղեցւոյ. օրինակի համար ինք հանդիման է ինքզինք հայտարարել «բարեկարգիչ կուտեր» մը և այս մասին քարոզներ խոսած և հոգւածներ տը-

պած ու գրություններ ցրած է ժողովրդին: Բ.— Խոսած է մոլորեցուցիչ քարոզներ եկեղեցւոյ վարդապետության և անոր վարչական օրենքներուն դեմ:

Գ.— Դասախոսած է երիտասարդական մեծ հավաքույթներու և գրած է հոգւածներ մամուլի մեջ աչնպիսի արտառոց մտքով և նյութով, որ երբեք պատշաճություն չունին հոգևորականի մը բերնեն լսվելու:

Դ.— Իբ «Հոգեբանական վեբլումում» մը երեք Միլիոն Հայերու» նյութով գրությունը, որ երեցավ հայ մամուլին ոմանց մեջ, բացարձակ անարգանք մըն էր նետված բոլոր հայերուն, որուն ընթերցումով միայն թուրքը պիտի հրճվեր:

Ե.— Բոլորովին անփույթ և արհամարհող վերաբերում ունեցած է Ս. Հաղորդության և այլ ծիսական սրբությանց նկատմամբ, և մերժած է անսալ իր հոգևոր ծնողին և այլոց, երբ անոնք իր թերություններն ու հանցանքը մատնանշած են իրան:

Մենք անպատշաճ և անհարմար կգտնենք թվել բոլոր այն հանցանքները, զոր գործած է պաղարկունությամբ հիշյալ քահանային:

Ուստի, փաստերու և իրողությանց համադրումով, Քալիֆորնիոյ Ազգային կեդրոնական Վարչությունը, իր հոգևորական ու աշխարհական անդամոց միաձայն վճիռով որոշեց քահանայագործելու իրավունքեն զրկել և խնդրել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին՝ կարգալուծ հայտարարելու ամբաստանյալ քահանային:

Առաջնորդական տեղապահ Քալիֆորնիո՝ ՎԱՐԴԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ-Ի ԿՈՆԴԱԿԸ

ԳԵՎՈՐԳ ՔԱՀԱՆԱ ԳԱՍԱՐՃՅԱՆԻ ԿԱՐԳԱԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԱՌԱՋՆՈՐԴԻ ԹԵՄԻՆ ՀԱՅՈՑ ԿԱԼԻՅՈՐՆԻՈՅ՝ ԳԵՐԱՊԱՏԻ Տ. ՎԱՐԴԱՆ ՍՐԱՋԱՆ ԵՊԻՍ-
ԿՊՈՍԻ ԳԱՍՊԱՐԵԱՆ ՀԱՐԱՋԱՏԻ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱՍՆԻ,
ՈՂՋՈՅՆ ԵՎ ՉՐԶՆՈՒԹԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Թեմիդ Լոս-Անջելոս քաղաքի Ս. Հակոբ եկեղեցու Գևորգ քահանա Գասարճյանի պաշտոնավարության և վարքագծի մասին ուղարկված պաշտոնական բոլոր պրոթյունները հանձնվեցան Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր խորհրդին՝ ի քննություն:

Գերագույն Հոգևոր խորհուրդը, մանրադրենին ռասումնասիրելով գործը, եկել է հետևյալ եզրակացության:—

Ա. Գևորգ քահանա Գասարճյանը, իր քահանայական կոչման համար տնօրենչ, տարրական գիտելիքներին անգամ անգիտակ է. նա չգիտե գործածել եկեղեցական գրքերը — շարական, ժամագիրք, տոնացույց: Նա չգիտե կատարել Հայ Եկեղեցու ծեսերն ու արարողությունները կրոնական վեհությանը, որ հավատացյալ մարդու հոգու վերա ազդի, նրան կրոնական զգացմունք ներշնչել և հոգեպես մխիթարել:

Բ. Նա չունի կրոնական զգացմունք. ուստի և չունի պատկառանք հանդեպ եկեղեցական ծեսերի ու արարողությունների, որի հետևանքով նա կատարում է ծեսերն ու արարողությունները մեքենայաբար և իր ճաշակով ու ըմբռնմամբ, և ո՛չ հայ եկեղեցու հնավանդ սովորությունների համաձայն, վիրավորելով հավատացյալի կրոնական զգացմունքը և իր հանդեպ արհամարանք հարուցելով:

Գ. Նա չունի քրիստոնեական-կրոնական աշխարհայացք և դեկավարում է օտար աշխարհայացքով. ուստի և եկեղեցում տված քարոզներով, եկեղեցուց դուրս կարգացած դասախոսություններով և մամուլին տված հոդվածներով քրիստոնեական աշխարհայացքին հակառակ տեսություններ է քարոզում, որով հավատացյալ ժողովրդի գայթակղության պատճառ է դառնում: Իր հիվանդ բարոյական ըմբռնումներով և մոլոր վարդապետությամբ օտարացնում է հայ մատաղ սերունդը եկեղեցուց, ազգից և Հայրենիքից, որով հարթում է ամերիկահայ երիտասարդու-

թյան առաջ օտարամոլության և ապագա ձուլման ուղին:

Գերագույն Հոգևոր խորհուրդը, վերահիշյալ պատճառաբանությամբ, խնդրում է Մեզ՝ հիշյալ Գևորգ քահանա Գասարճյանին զրկել քահանայական կարգից և կոչումից:

Մենք, ուսումնասիրելով գործը և նկատելով անհեղինակ վարչության ու Գերագույն Հոգևոր խորհրդի քննություններն ու եզրակացությունները, կատարելապես համոզվեցինք, որ Գևորգ քահանա Գասարճյանը իր հակա-եկեղեցական և հակա-կրոնական մտածելակերպով ու հրապարակային ելույթներով հակա-կրոնական ոգի է ներշնչում ամերիկահայ երիտասարդության, հարթելով նոցա առաջ օտարացման ու ձուլման ճամբան և գայթակղության աղբյուր է հանդիսանում Մեր հավատացյալ հոտին: Ուստի՝ հետևելով Մատթեոս ավետարանի խոսքին՝ «Վա՛յ աշխարհի ի գայթակղութեանց, բայց վա՛յ մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռն գայցէ գայթակղութիւնս... եթէ ակն թո գայթակղեցուցանէ զքեզ, խլեա՛ զնա և ընկեա՛ ի քէն...» (Մատթ. ԺԸ): Մեր այս Հայրապետական Կոնդակով հայտարարում ենք Գևորգ քահանա Գասարճյանին կարգալուծ՝ և դատում աշխարհականների դասը՝ վերստին վերանվանելով նորան Լեւոն:

Պատվիրում ենք սույն Կոնդակը կարգալ հրապարակել իր ծովախ առաջ և գրավոր տեղեկանք տալ նորան իր կարգալուծության մասին, այլ և առնել նորանից հոգևորական կոչման վկայականը և իրազեկ դարձնել կատարվածի մասին մարմնավոր իշխանության՝ ի խույս թյուրիմացությունների և շահագործությունների:

Մաղթում ենք Բարձրյալին, որ նա զերծ պահե Մեր հոգևոր Դասը այս սխալ և ազգի համար վտանգավոր շփոթից և Մեր հոտը գայթակղությունից:

Գ Ե Վ Ո Ր Գ Զ

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԹ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա Կոնդակս ի 10 յունուարի 1948

Փրկչական ամի և ի Տոմարիս ՌՅՂԷ

Ի. Ս. Էջմիածին